ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշոփի 1

№ 265-Ա « 29 » հունվարի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի Հ.5793-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության հ. Ն/28506-24 գրությունը, քաղաքացու դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2010 թվականի դեկտեմբերի 8-ի «Երևանի Նուբարաշենի 5-րդ փողոցի հ.5 բնակելի տան և հողամասի նկատմամբ Աննա Սուրենի Մարգարյանի իրավունքները վերականգնելու, 95.03քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.5793-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.Նուբարաշենի 5-րդ փողոցի հ.5 հասցեի բնակելի տանը տրամադրել ՝ «Նուբարաշենի 5-րդ փողոց, հ.5/1 տուն» հասցեն:».

2)որոշման 3-րդ կետում՝ «աշխատակազմի քարտուղարին» բառերը փոխարինել «աշ-խատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ